

# ՈՒՍՏԱԾԻ ՅԻՇԱՏԱԿԵՐՊԵՆԸ

Ա. ԱԳԵԼԵԱՆԻ

## ՅՈՒՅԱԿԸ

I Սնատեմբեր.

Այսօր վերջապէս յայգնի կը լինի, թէ մկրեր են ընդունւած նորեկներից, ժամը 12-ին ինստիտուտի նախագաւթում, ուր ազագ ժամերին ուսանողները սովորաբար խմբւում են զրուցելու և ուր աջ ու ձախ պատերի վրայ ապակիապապ շրջանակների մէջ կախւած են դպրոցի վարչութիւնից ուսանողութեանը ուղղած զանազան յայտարարութիւններ, կը կախեն այն բախտաւորների ցուցակը, որոնց ժակարտագիրը չէր դաւաճանել, Մեծ էր սպասումը, որ ամբողջապէս կլանել էր բոլորի միտքն ու հողին: Ամեն մի ցանկութիւն, ամեն մի հոգս և ուշադրութիւն գրաւող իր այդ օրը հեռացել էր մի կողմ, տեղի դալով միայն ընդունւած լինելու ջերմ գենչանքին: Նորեկի մասաղ հոգին դրա մէջ էր դեմնում իր ամենաբարձր երջանկութիւնը... Եւ կրիստիկական բոպէն, որի անյաջող ելքը, ով գիտէ, գուցէ պիտի աւերէր նրա նախագծած ծրագիրները, խորակէր նրա բոլոր յոյսերը, փայտոն ապագան, այդ բոպէն խիստ լարել էր նորեկի ջղային ամբողջ համակարգութիւնը և յառաջացրել հոգեկան ծանր դագնապ: Եւ մարդաշ հոգու մէջ յաջորդաբար ծնունդ էին առնում մերթ մակընթացութիւն—բուռն ցուսերի խրոխ կուգակումը—, և մերթ գեղագրութիւն—սիրու աւացնող, դառն յուսահագութիւն... Եթէ չընդունեց... Այն ժամանակ կորչում է մի ամբողջ դարի, և մի ամբողջ դարի դպրոցի

Դաները փակ են լինելու նրա առաջ... իսկ յետոյ, մի դարուց յեռոյ, գուցէ յաւիտեան...

Առաւօրեան ժամը 9-ին մօս էր, որ դուրս եկայ բնակարանից: Դուրս գալով փողոց, կուրծքս աղաքւեց մի ինչ որ ծանրութիւնից: Վեցերորդ յարկի ցածր սենեակների ծանր ու խոհանոցային բուրմունքներով յագեցած մթնոլորդից յերոյ նորամուտ աշնան պաշ ու յարակ օդը ունեցաւ հմայիչ ներգործութիւն: Ես սկսեցի ազատ շունչ առնել, արեանս շրջանառութիւնը կենդանացաւ, ախորժելի ջերմութիւն պապեցի ինձ և հոգիս պարզեց, որ պէս այդ օրւայ փայլուն առաւօրը: Աքանչելի օր էր. նոր ելած արեկի նոսր շողքերի պայծառութեանը օգնութեան էր եկել երկնքի ջինչ կապուտակը, որը անդրադարձնելով արեկի լուսանամանչ ճառագյթները, սփռում էր երկրի երեսին աչք հրապուրող լուսաւորութիւն: Եւ այդ լոյսի մէջ որպէս մի նկար ընկլմւած էր ճոխ բռնստկանութեան մէջ ծփող զեղեցկաշէն քաղաքը: Կանաչազարդ և սաղարթախիր ծառերը պայծառ օդի հետ միասին մկրտւել էին գիշերային ցօղով և այժմ իրանց փայլուն, անարար հայեացքները արեին ուղղած, ովսաննա էին կարդում նրան... Եւ ահա նոցաշունչն էր, որ սփռել էր ամենուրէք մի սքանչելի զովութիւն ու թարմութիւն... Ես անցնում էի այն փողոցով, որը ուղղակի փանում էր դեպի ինստիտուտ: Լայն փողոց էր, որի մէջ փեղով և ափերով հրաշալի և սիւերախիր ալլէյներ էին ընկած: Փողոցը մաքուր էր, որպէս գիւղականի տան յագակը, և ջրւած: Քաղաքի կեանքը եռում էր արդէն էլեքտրական դրամւայը արագութեամբ օդն էր ծղում: Կառքերը դէս ու դէն էին սլանում, դրաներով իրանց հետ գործերով ու հոգսերով ծանրաթեռնւած դէմքեր. մէծ և կոշտ ու կոպիր սացլերը իրանց հսկայական բեռներով սասնկացնում էին փողոցում դիրող դշրոցը և նոյն իսկ խայցնում ամեն մի այլ ձայն: Տանրիկինները շրապում էին շուկայ, ծառայողները իրանց գործին... Աշակերտներն ու աշակերտուհիները կամացուկ քչփչալով, ուրախ և անմեղ դէմքերով դէպ ուստումնարան էին շփապում: Ամէնքը զիտէին իրանց անելիքը, բոլորի այսօրը երեկ էր որոշւած: Միայն այնոքեղ, ինստիտուտի առաջ խթւած ալծուփ սրբերի համար դիրում է անորոշութիւն, միայն նրանց համար չկայ անդորրութիւն

Ա հանգիստ։ Միայն ժամը 12-ին յայտնի կը լինի. Դեռ ամբողջ 3 ժամ պիտի սպասել, այսինքն պիտի դանշւել։

Ինստիտուտի առաջ գրանիտեայ հսկայական քարերից շինւած և լայնարարած սանդուխքների վրաց բաւականին բազմութիւն կար կանգնած. մի մասն էլ նստած էր ալլէյներում շարած նստարանների վրայ։ Մեծ մասամբ նորեկներ էին։ Ամեն մի ազգութիւն մի տեղ էր խմբւած. միայն ժիր, միազբաղ և պնդերես հրէան էր, սր ամեն դեղ քիթն էր կոխում, նոր բան լսելու, նոր բան սովորելու։

Ժամանակը դանդաղ էր ընթանում. ամեն մի ժամը դարի էր թւում. բոլորի դէմքերի վրաց խալրում էր անհանգստութեան փակնապը։ Եւ որքան մօւենում էր կրիպիկական բուլէն, այնքան էլ սասպիկանում էր այդ փագնապն ու ջլային դողը... Անսիրտ, անխնայ բուզէ, որ ոմանց համար բերելու էր երջանկութիւն, իսկ շափերին դառն յուսահագութիւն և նոյն իսկ արփասուք։

Ինստիտուտի դարպասի դռներն էլ կորցրել էին իրանց ամառային հանգիստը. դղերքը շարունակ ներս էին մդնում և դուրս դալիս։ Ներս մընելով նրանք ամեն անգամ կանգ էին առնում այն չարագուշակ պարի հանդէպ, որքեղ պիտի կալոէին ընդունւածների ցուցակը։ Եւ լսում էին դառն, սրբաճմլիկ բացականշութիւններ։

— Իէ՞ս յայտնեն, վերջանայ էլի, ինչու այսքան յեփածդում են. սա կարարեալ բարբարոսութիւն է։

## II

Ես մօսեցայ մեր ողերանց, որոնք խմբւած էին դպրոցի առաջ ընկած գեղաշուք ալլէյում։

— Տշէք, մոց էք. հարցրի բարեկերով բոլորին։

— Ժամը 12-ին կորոշւէ մեր վիճակը, պատասխանեց Բէհրամեանը, որ ձեռները խաչածե կուրծքին սեղմած՝ աշխափում էր վարագուրել իր նեարդային դողը։ Ալ վճռւի մեր կեանքի կամ մահւան խնդիրը, աւելացրեց նա ժպարով և աւելի ամուր կծկւեց իր դեղում։

Բէհրամեանը 18 փարեկան մի նիհար և գունադ ողայ էր, որի երեսը վաղոց էր զրկւել պատանեկական թարմութիւնից և

անմեղութիւնից։ Դալուկ դէմքը, կապուգակներով ակօսւած աչքերը և երեսի վրաց գեղ-բեղ դուրս ցցւած բշրիկները ցոյց էին բալիս, որ նա վաղուց գերի է եղել շւայր կեանքի։

—Երեք ժամից յերոյ կամ կընկնենք եօթներորդ երկինքը և կամ ճանապարհորդական պայտւսակները ձեռներս առած դէպի կայարան կը շփափենք առանց յեզ նայելու, ճիշդ այնպէս, ինչպէս այդ անում էին դեռ քննութեան կիսում կարւողները։

Այս խօսքերը ասաց մի նորեկ այնպիսի անորաբերութեամբ, որ կարծէք նրա համար միենոյն էր ընդունւել կամ չընդունւելը։

—Ե՛ն, անկասկած ես չեմ ընդունւելու. հառաջանքով արտասանեց մի պատանի, որ նորեկների մէջ ամենաջահէին էր,—ինչպիսի լինի իմ ճարը։

Պատանու տիսրամած և միախոնհ հայեացքը մասնում էր, որ նրա հոգու մէջ մրրիկ է տիրում. թախծալի աչքերի արտայալութիւնը կարեկցութիւն էր շարժում։ Նա հանգիստ չէր իր նստած գեղում. նրա կրծքի վրաց մի ծանրութիւն էր իջել, որ դանջում էր անընդհատ... Ախ, ինչ կը լինէր, եթէ նա կարողանար դիւթական մի շարժումով լուծել այդ սպանիչ դրութիւնը և իր ազգանունը գրւէր չարաբասպիկ ցուցակի մէջ։

—Ինչո՞ւ, ասաց Բէհրամեանը թեթև նախանձով, քեզ ընդունած կը լինեն. չէ որ դու բոլոր առարկաներից լաւ թւանշան ես սուացել։

—Ճշմարիտ է, բայց ով գիսէ։

Եւ իր մրազբաղ հայեացքը մի կէսի յառած արձանացաւ Ուսանողները նոյնպէս կամաց-կամաց խմբւում էին ինստիտուտի առաջ։ Նորեկները նայում էին նրանց հիացմունքով, նայում էին և չին կշփանում։ Ահա երջանիկ մարդիկ. արդեօք դրանցից դուրս էլ այլ երջանկութիւն կայ. լինել ուսանող, հազնել ուսանողական զգեստը, երթալ դասախոսութիւնների, աշխատել, ձեռք բերել այն դիրքն ու արտօնութիւնները, որ վայելում է ուսանողը հասարակութեան մէջ, կանանց և մանաւանդ օրիորդների շրջանում, բերկրանք բերել ծնողացը և մանաւանդ մայրիկին ուսանողի շքեղ Փորմացով... Ե՛ն, արդեօք ճակապագիրը խշճալու է։

Խմբին մօպեցաւ նորեկ Մարութեանը, ու ժպիքես բարեւց

բոլորին։ Նորեկների մէջ տարիքով ամենից մեծն էր։ Մի գեղեցկա-  
դէմ և վայելչահասակ ողայ։

—Հը՛, ինչու եղաւ անցած օր, պատմիր լսենք, Դիմեցին  
Մարութեանին նստղներից մի քանիսը։

—Ինչպէս պիտի լինի. անիծածը ուզում էր կորել էլի։ Մի  
օյն էր, օյն, բայց լաւ պրծայ։

—Ի՞նչ առարկացից էր, հարցը ես։

—Տրիգոնոմետրիայից, պարախանեց Մարութեանը, —այդ  
անիծւած Բուսլակի մասին սուփու չեն ասում, թէ նա ունի մի որոշ  
սիստեմ, այն է հՕ-ից մէկին միայն անցկացնել. զօրով, ուշ-  
լակի զօրով ուզում էր ինձ կորել... Դէ զիսէք, թէ ես ինչպէս  
էի սովորել այն բոլոր խնդիրների լուծումը, որ սովորաբար առա-  
ջարկում է Բուսլակը. ջրի նման զիսէք... Մօդեցայ փախտակին.  
Դեռ ինդրի պայմանը չըվերջացրած ես արդէն գիտէի, թէ որ  
խնդիրն է. ասաց, երկու րոպէում լուծեցի։ Բուսլակին Դիւր չե-  
կաւ այդ, որովհետեւ երեկի իր հաշուղ պիտի կորէր ինձ։ Ասաց թէ  
ինդիրն ուղիղ է լուծւած, բայց մէկն էլ է հարկաւոր լուծել։ Նոր  
խնդիր առաջարկեց։ Նոյն արագութեամբ լուծեցի։ Գուաւ մի փոք-  
րիկ թերութիւն լուծման եղանակի մէջ և ասաց. եթէ ուզում էք  
լաւ թւանշան սրանալ, պիտի մէկն էլ լուծէք։ Ես հաւանութեան  
նշան արեցի. Բուսլակ առաջարկեց ինձ երրորդ խնդիրը և պիտի  
սեմ՝ դժւարը։ Այդ ես լուծեցի. Վերջը Բուսլակը դարձաւ. ինձ  
ու ասաց. ես ձեզ չօրսից աւելի չեմ կարող դնել։ Ես մնացի քա-  
րացած. ի՞նչու, պարճառը, դա անարդարութիւն է. ինձ հինգ  
պիտի դնէք։ Բուսլակը թարսեց. չէ, ասում է, ես չեմ կարող  
աւելի դնել։ Յերոյ քիչ մրածեց և ասաց. ուզում էք մէկ խնդիր  
էլ առաջարկեմ. եթէ կարողացաք լուծել, օ կը դնեմ, եթէ չէ եր-  
կու կըստանաք... Նար բարի, ասացի ես Առաջարկեց մի բարդ  
խնդիր, որը ինձ նոյնպէս ծանօթ էր նրա խնդիրների ժողովածուից։  
Զեր արեն եմ ասում, այնպէս լուծեցի, որ մնաց էլ կորած... Էլ  
ճարն ի՞նչ էր, սրիպւած եղաւ օ դնելու...»

—Այդ անպիտանութիւն է, ասաց Բէհրամեանը վրդովւած,  
ինկլիզիցիայից էլ վար է...»

Եւ կրկին կծկեց իր տեղում. բայց եթէ ինքը ընդունած չըլինի...

— Ծիծաղ է, ծիծաղ, շարունակեց Մարութեանը, — Բուլակեի մասին ասում են, որ ուղղակի յայռնել է, թէ արիստած է քննութիւն գործների մեծ գոկոսը կորելու, որովհերու այդ պահանջում են. հւր որպեղ պիտի զերեղել բոլորին...

— Եղբար, դոշաղ ես, ասացին այս ու այն կողմից:

Իսկ Մարութեանը ժպիում էր և ինքնաբաւական:

Մնացած գղերանցից ոմանք յաջող էին անցել Բուլակեի ձեռքից, իսկ ոմանք բախտ էին ունեցել այդ առարկայից այլ ուսուցչի մօտ քննւելու, որը համեմափարար բարեսիրա էր:

### III

Ահա ժամը գասնըմէկ ու կէսն է... Նորեկները կամաց-կամաց խմբ ում են նախագաւթում: Ասեղ գցելու գեղ չկայ: Ուսանողներից շափերն են ներկայ. եկել են ոմանք իրանց ծանօթների, ոմանք բարեկամների մասին գեղեկանալու: Նրանք միայն յուսադրում են, սիրո են դաշտաւագութեան սիրոը ուժգին է արոփում: Զային ցնցումներ են խաղում շափերի դէմքերի վրայ: Քմբն են խօսում, ծիծաղում, հանաքներ անում. բազմութիւնը լուռ է և շրթունքները կծած սպասում է, սպասում է իր նեարդային ամբողջ համակարգութիւնը լարած... Մի թեթև շարժում, ոփի մի ձայն դէպի դիւնապունը գանող սանդու լների կողմում — և ամբոխը ցնցում է ամբողջովին... Ժամացոյցի սլաքների զոյգը կանգնած է XII-ի դիմաց, մի րոպէ է մնում: Բարձրանում է աղմուկ... Խորհրդաւոր ըռպէն շարժում է բոլորին և գագնապը հասնում է իր զաղաթնակէրին: Զարկեց ժամը 12-ը: Բազմութիւնը լուց և մի քանի վայրկեան ինքնամոռացութեան մէջ անցկացրեց... Բայց ոչինչ չըկարդեռ ես, և աղմուկը նորից բռնկւեց:

— Դէ բերեն էլի՞, գոչում էին դէս ու դէսից:

— Մինչ երբ պիտի գլեէ այս դրութիւնը:

Աղմուկը խրոխպանում է, իրարանցումը սասպիկանում: Անցաւ 5 բոպէ 12-ից և յանկարծ նախագաւթից դէպի վերև գանող սանդուղքի գլխին երևաց ծառան՝ շրջանակի մէջ դրած ցուցակը ձեռին:

— Յուցակը, ցուցակը...

— Ամամ, ինքնամուացութեան մէջ մոնչաց բազմութիւնը:  
Եւ ամենքը մի վայրկեան պատճնակեցին, դիւթական պախ-  
տակը տեսնելուն պէս: Նափերը սառել, մեխած էին տեղներում,  
ոմանց թուքը չորացել էր կողորդում, շափերը հեալով և արագա-  
շուն: Դէս ու դէն էին հրում կանգնածներին և շրապում դէպի-  
հրեղէն պախտակը:

— Ճանապարհ... Ճանապարհ ուէք որ ցուցակը կախէ, գոչում  
էին այս ու այն կողմից:

Մառան դժւարութեամբ էր անցնում բազմութեան միջով:  
Նափերը կռանում, փորձում էին որսալ իրանց ազգանունը, սակայն  
իզուր ջանքեր:

— Ճանապարհ ուէք, հրամայական եղանակով գոչում էր ծա-  
ռան և արհամարանքով ժպառում: Մի քանի վայրկեան ես, և դախ-  
տակը կախւած էր պարից:

Բոլորի դապավճիռն էր այդ, որ ոմանց արդարացնում էր, իսկ  
ոմանց մահւան դապապարպում... Եւ ամբոխը ուժգնութեամբ մշտ-  
ւեց դէպ այդ նւիրական տեղ՝ ոմանց երջանկութեան, ոմանց  
դառնութեան ալղիւրը... Աղմուկ, կարմրած և քրտնած դէմքեր,  
քիրերից դուրս թռչող աչքեր և կորակի ձայներ:

— Իմ անունս չկայ:

— Ես ընդունւած եմ:

— Լաւ նայեցի՞ր. լաւ նայիր...

— Մենք ընդունւած ենք...

Եւ միայն ընդունւածների ձայներն էին հնչում շանթահար-  
ների պապանձւած բազմութեան միջից:

Մի ժաման ընթացքում ամբոխը հազիւ ցրւեց: Թէ ընդուն-  
ւածները և թէ չընդունւածները մի քանի անգամ ցուցակին նա-  
յելուց յետոյ միայն թողնում էին նախագաւիթը և հեռանում,  
ոմանց սրբերը բերկութեամբ լցւած, իսկ ոմանցը դառնութեամբ  
խոցւած... Մի կողմ ուրախութիւն, միւս կողմ արդասուք... Որ-  
պիսի դառն և սրբաճմիկ գեսարան, երբ ընկերներից ոմանք իրանց  
զգում են երջանկութեան գագաթնակէտին, մինչ միւսների առաջ  
սեացած է աշխարհը, և որմնց կուրծքը պարոււում է յուսահարութիւ-

նից... Ուրախները, ինչպէս իւշը ջրից, բաժանում, հեռանում  
էին մի կողմ. վշտահարները վշտահարներին մօփենում միմեանց  
միմիթարելու, և փախչում էին երջանիկներից իրանց վիշտը չկրկ-  
նապափկելու համար:

## IV

**Սիրոնցից միայն Միհրանեանը չէր լնդունել:** Եւ չէր  
երեւում:

—Ի՞նչ դառաւ Միհրանեանը, հարցրեց Մարութեանը գւար-  
թագին:

—Տուն գնաց, պատասխանեց մէկը:

—Աչքերին արդասուք կար, աւելացրեց Բէհրամեանը,—խեղճ  
է, գնանք միմիթարենք. մրածենք, նրան մի կերպ օղնենք:

Եւ միասին գնացինք Միհրանեանի բնակարանը: Մոնելով նրա  
սենեակը, որդացին գրանք մէջքի վրայ պառկան: Նա երկու ձեռով  
բռնել էր ծակադը և աչքերը փակել: Շունչն անդամ չէր լսում,  
այնքան խաղաղ էր նա պառկած: Սակայն խաղաղ չէր նրա ներքին  
աշխարհը. ծանր վիշտը մաշում էր նրա սիրու և խեղճ որդան  
չկարողանալով դիմանալ հասած հարւածին, թուլացել, մարել էր  
տեղն ու տեղը և մի կերպ իրան փուն գցելով, ընկել անշնչացած:

Միհրանեանը մի վերին ասութեանի զգայուն և ինքնասէր աղաջ  
էր: Վշտահար զգացմունքների և վիրաւորւած ինքնասիրութեան  
ահեղագու մանչիւնին չէր դիմացել նրա թուլակազմ մարմինը. և  
նա այժմ բաքութեան մէջ էր:

—Այ որդայ, Միհրանեան, գոշեց Բէհրամեանը, շարժելով հի-  
ւանդի ձեռքը,—ի՞նչ է պատահել քեզ:

Միհրանեանը լայն բաց արաւ աչքերը, նայեց ընկերների  
վրայ, մի վայրկեան դիրեց զարմանքով և յանկարծ երկու ձեռով  
ծածկելով երեսը, սկսեց դառնաշունչ հեկեկալ:

—Տօ, գիծ ես, ինչ ես, դիմեց նրան Մարութեանը, վեր կաց.  
վեր կաց գնանք զրօննենք և ամեն ինչ կ'անցնի:

—Ես անբախտ եմ, մըմնջաց Միհրանեանը՝ դառնագին հնկե-  
կանքի միջից,—հիմայ ես ինչ անեմ... Խեղճ հայրս. Բալախա-  
նու նաւթ ու մուրը կուլ բալով, հազար ու մի զրկանկներ կրելով,

ժր ամբողջ ընդունիքի բողազից կպրելով ինձ ուսում է գւել, "որ գամ բարձրագոյն դպրոց մրնեմ, աւարտեմ և, վերադառնալով հայ-քենիք, ազատեմ բոլորին դժոխացին կեանքից. իսկ այժմ... Խեղճ հայր... ես մեռած եմ քեզ համար... ի՞նչ միոք կայ այլ ևս ապրե-ձու. մահը ամենափրկարար ոյժն է այս բոպէին... Ամիս...

Ամենքը այդ խօսքերի ճնշող աղդեցութեան դակ մի ըսպէ լուցին: Տիրութեան վարագոյրը իջաւ նրանց դէմքերի վրայ և ընկերները գլուխները խոնարհած մրածում էին, թէ ինչպէս օդ-ներ իրանց դժբախու ընկերոջը:

Միհրանեանի հայրը մի մեծ ընդունիքի ուէր գործակարար էր Քալախանի: Տեսնելով թէ ինչպիսի գրաւիչ ռոճիկներ են սպանում Բաքուում ինժենէրները, նա վճռեց իր որդուն ևս բարձրագոյն ուս-ման դալ: Եւ այդ օրից նա իր ամբողջ ընդունիքը զրկանքների ենթարկեց միայն իր մեծ որդու համար: Տղան աւարտեց ռէալ Դպրոցը: Խազէյինները խոսքացան օգնել նրան նիւթականա-պէս՝ բարձրագոյն ուսում սրանալու համար: Այդ նպարակով քանի՛ անգամ էր հայրը դիմել նրանց:

—Այսքան դարի ձեզ համար չնին ռոճիկով և ամենայն հա-ւագարմութեամբ ծառայում եմ. ինչ է իմ դրութիւնը. նոյն 30 ռուբլի ռոճիկը և նոյն նաւթն ու մուրը: Գոնէ որդուս օգնեցէք:

Եւ յաջողւել էր: Անսահման էր հօր ուրախութիւնը այն օրը. խսկ մշտմ, եթէ լսի այս բոթաբեր լուրը:

—Խեղճ հայր, մրմնջաց նորից Միհրանեանը, ինձ ամենից շատ նրա դրութիւնն է փանջում և այն վիշտը, որ նրան հալ ու մաշ պիտի անէ, երբ իմանայ ընդունւած չլինելու:

Եւ նա կրկին սկսեց հեկեկալ:

Ուրախ, ճակարտները բաց և համարձակ աշխուկով ներս մրած ընկերները լուր էին և ոչ մի խօսք չէին դպնում ասելու: Թողին զբոսանքի գնալու հարցը և մնացին:

—Ոչինչ, ասաց Բէհրամեանը, այսուել կը մնաս, մի լաւ ու-սուցչի մօք կը պարբասարես, որը կապեր ունենայ ինսպիրուտի հետ և եկող սեպտեմբերին կը մրնես ուսանող: Քանիսն են այս դարի այդ միջոցով մրել: Եթէ այդ էլ չի յաջողւիլ, մինիսորին կը դի-

մես, կամ այլ բարձրաստիճան մարդու և կը պատմեա նրան դրաւ-  
թիւնց, ծնողներին վիճակը:

Ոչ ոք առաջիկեց այդ առաջարկութեանը:

— Այդպէս էլ հօրդ և բարերարներին կը գրես, աւելացրեց  
Մարութեանը:

Միհրանեանը փոքր ինչ խաղաղւեց, տեսնելով ընկերների ան-  
կեղծ հոգագորութիւնը և զերմ կարեկցութիւնը:

— Կէ վեր կաց դնանք զրօսնենք, Դիմեց կրկնին Մարութեանը:

— Զէ, գնացէք. սիրա չէ մնացել ինձանում, պատասխանեց  
Միհրանեանը:

Երկու հոգի մնացին վշտահարի մօտ, իսկ մնացեալները ցրեսու-  
թիւն ասելով, դուրս եկան:

— Ո՞ւր գնանք, Դիմեցին այս ու այն կողմից:

— Գնանք պարկ, ասաց Մարութեանը. Երաժշտութիւն կը  
լսենք ու զարեջուր կը խմենք: Պիտի միմեանց շնորհաւորենք:

— Դա ոչինչ, պարասիսանեց Բէհրամեանը, տանը պիտի քէֆ  
սարքենք և հին ունանողներին էլ հրաւիրենք: Իսկ այժմ իսկապէս  
սպարկ գնանք և գետնենք ինչ գեղեցկուհիներ կան այնտեղ:

Սմենքը քըքջացին: Ու խումբը շարժւեց: